



Primacy of the Armenian Apostolic Orthodox Church  
of the United Kingdom and Republic of Ireland

**His Grace Bishop Hovakim Manukyan, Primate**

**Saint Yeghiche Armenian Church Parish**

**Սբ Եղիշէ Հայոց Եկեղեցւոյ Ծուխ**

Cranley Gardens, Kensington London, SW7 3BB

t. +44 (0)20 7373 8133 Pastoral office email. [info@styeoghiche.org.uk](mailto:info@styeoghiche.org.uk)

[www.styeoghiche.org.uk](http://www.styeoghiche.org.uk) <https://www.facebook.com/StYeghiche>

## SUNDAY BULLETIN

**1: List of the Sunday Reading,**

**03rd September 2017**

**Bulletin No 37/17**

### **ՊՕՂՈՍ ԱՌԱՔԵԱԼԻ ԿՈՂՄԷ 2 ԿՈՐՆԹԱՑԻՆԵՐԻՆ ԳՐՈՒԱԾ ՆԱՄԱԿԷՆ 2:12-3:3**

Ուրեմն երբ հասայ Տրովադա՝ Քրիստոսի աւետարանը քարոզելու, թեպէտ Տէրը դուռ մը բացած էր ինձի, անդորրութիւն չունեցայ հոգիիս մէջ, որովհետեւ հոն չգտայ եղբայրս՝ Տիտոսը. հապա հրաժեշտ առնելով անոնցմէ՝ մեկնեցայ Մակեդոնիա:

Շնորհակալութիւն Աստուծոյ, որ ամէն ատեն մեզի յաղթութիւն կը պատճառէ՝ Քրիստոսով, ու զինք ճանչնալուն հոտը մեզմով կը յայտնաբերէ ամէն տեղ: Որովհետեւ մենք՝ Աստուծոյ համար՝ Քրիստոսի անոյշ հոտն ենք, թէ՛ փրկուածներուն եւ թէ՛ կորսուողներուն մէջ: Ոմանց՝ մահուան հոտ դէպի մահ, ոմանց ալ՝ կեանքի հոտ դէպի կեանք: Եւ ո՞վ ընդունակ է ընելու այս բաները: Քանի որ մենք շատերուն պէս չենք, որոնք կը խարդախեն Աստուծոյ խօսքը. հապա անկեղծութեամբ, Աստուծմէ զրկուած եւ Աստուծոյ առջեւ կը խօսինք՝ Քրիստոսով:

Սկսի՛նք դարձեալ մենք մեզ յանձնարարել. կամ թէ՛ ոմանց պէս՝ պէ՛տք են մեզի յանձնարարական նամակներ ձեզի, կամ յանձնարարութիւն ձեզմէ: Դո՛ւք էք մեր նամակը՝ մեր սիրտերուն մէջ գրուած, ճանչցուած ու կարդացուած բոլոր մարդոցմէն. բացայայտ ըլլալով որ դուք Քրիստոսի նամակն էք՝ մեր սպասարկութեամբ, ո՛չ թէ մելանով գրուած, հապա՝ ապրող Աստուծոյ Հոգիով. ո՛չ թէ քարեղէն տախտակներու վրայ, հապա՝ սիրտին մարմնեղէն տախտակներուն վրայ:

### **The Epistle of St Paul to the 2 Corinthians 2:12-3:3**

Now when I came to Troas for the gospel of Christ and when a door was opened for me in the Lord, I had no rest for my spirit, not finding Titus my brother; but taking my leave of them, I went on to Macedonia.

But thanks be to God, who always leads us in triumph in Christ, and manifests through us the sweet aroma of the knowledge of Him in every place. For we are a fragrance of Christ to God among those who are being saved and among those who are perishing; *to the one an aroma from death to death, to the other an aroma from life to life. And who is adequate for these things?* For we are not like many, peddling the word of God, but as from sincerity, but as from God, we speak in Christ in the sight of God.

#### **Ministers of a New Covenant**

Are we beginning to commend ourselves again? Or do we need, as some, letters of commendation to you or from you? *You are our letter, written in our hearts, known and read by all men;* being manifested that you are a letter of Christ, cared for by us, written not with ink but with the Spirit of the living God, not on tablets of stone but on tablets of human hearts.

### **ՈՂՁՈՅՆ Ս ՊՍՏԱՐԱԳԻ – KISS OF PEACE**

*ՈՂՁՈՅՆ ՏՈՒՔ ՄԻՄԵԱՆՑ, Voghchooyn dook mimiantz, Give greetings to one another,*

*ՔՐԻՍՏՈՍ Ի ՄԷՁ ՄԵՐ ՅԱՅՏՆԵՅԱԻ, Kristos ee metch mer haidnetzav,*

*Christ is revealed among us,*

## 2: A short interpretation of the Gospel reading under the title The hard sayings'

### ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ ԱԻԵՏԱՐԱՆ ԸՍՏ ՄԱՐԿՈՍԻ 6 :30-44

Առաքելները հաւաքուեցան Յիսուսի քով ու պատմեցին անոր ամէն բան, թէ՛ ինչ որ ըրին, թէ՛ ինչ որ սորվեցուցին: Ան ալ ըսաւ անոնց. «Դ՞նք առանձին եկէ՛ք ամալի տեղ մը, եւ հանգչեցէ՛ք քիչ մը». քանի որ շատեր կու գային ու կ'երթային, եւ հաց ուտելու իսկ ժամանակ չէին ձգեր: Ուստի նաւով ամալի տեղ մը գացին՝ առանձին:

Բազմութիւնը տեսաւ զանոնք՝ որ կ'երթային:

Շատեր ճանչցան զայն, ու ոտքով՝ բոլոր քաղաքներէն հոն վազեցին, եւ անոնցմէ առաջ հասնելով՝ անոր քով համախմբուեցան: Յիսուս, երբ դուրս ելաւ, մեծ բազմութիւն մը տեսնելով՝ զթաց անոնց վրայ, որովհետեւ հովիւ չունեցող ոչխարներու պէս էին. ու շատ բաներ սորվեցուց անոնց: Երբ շատ ժամեր անցան, իր աշակերտները եկան իրեն եւ ըսին. «Հոս ամալի տեղ մըն է, ու ժամանակը արդէն շատ ուշ է: Արձակէ՛ ժողովուրդը, որպէսզի երթան շրջակայ արտերն ու գիւղերը եւ իրենց հաց գնեն, որովհետեւ ոչինչ ունին ուտելու»: Բայց ինք պատասխանեց անոնց. «Դ՞նք ստունք որ ուտեն»: Ըսին իրեն. «Երթանք գնէ՛նք երկու հարիւր դահեկանի հաց ու տա՛նք ստունք՝ որ ուտեն»: Ըսաւ անոնց. «Քանի՞ նկանակ ունիք. գացէ՛ք՝ նայեցէ՛ք»: Երբ գիտցան՝ ըսին. «Հինգ, եւ երկու ձուկ»: Հրամայեց անոնց, որ բոլորը կանաչ խոտին վրայ՝ խումբ-խումբ նստեցնեն. ու նստան հարիւրական եւ յիսունական շարքերով: Հինգ նկանակներն ու երկու ձուկերը առաւ, դէպի երկինք նայելով՝



**Five Thousand Fed** օրհնեց, մանրեց նկանակները եւ տուաւ իր աշակերտներուն, որպէսզի հրամցնեն անոնց. երկու ձուկերն ալ բաժնեց բոլորին: Բոլորը կերան, կշտացան, եւ վերցնելով բեկորներն ու ձուկերը՝ տասներկու կողով լեցուցին: Այդ նկանակներէն ուտողները՝ հինգ հազարի չափ այր մարդիկ էին:

### The Holy Gospel of Jesus Christ according to Mark 6 :30-44

The apostles gathered together with Jesus; and they reported to Him all that they had done and taught. And He said to them, “Come away by yourselves to a secluded place and rest a while.” (For there were many *people* coming and going, and they did not even have time to eat.) They went away in the boat to a secluded place by themselves.

#### **Five Thousand Fed**

*The people* saw them going, and many recognized *them* and ran there together on foot from all the cities, and got there ahead of them. When Jesus went ashore, He saw a large crowd, and He felt compassion for them because they were like sheep without a shepherd; and He began to teach them many things. When it was already quite late, His disciples came to Him and said, “This place is desolate and it is already quite late; send them away so that they may go into the surrounding countryside and villages and buy themselves something to eat.” But He answered them, “You give them *something* to eat!” And they said to Him, “Shall we go and spend two hundred denarii on bread and give them *something* to eat?” And He said to them, “How many loaves do you have? Go look!” And when they found out, they said, “Five, and two fish.” And He commanded them all to sit down by groups on the green grass. They sat down in groups of hundreds and of fifties. And He took the five loaves and the two fish, and looking up toward heaven, He blessed *the food* and broke the loaves and He kept giving *them* to the disciples to set before them; and He divided up the two fish among them all. They all ate and were satisfied, and they picked up twelve full baskets of the broken pieces, and also of the fish. There were five thousand men who ate the loaves.

### 3: List of the Feasts celebrated in the Armenian church

#### Սուրբ առաքյալների՝ Հակոբոսի և Շմավոնի հիշատակության օր

Ս. Հակոբոս առաքյալը Զեբեդյան Հակովբոսից տարբերվելու համար «Ալփյան և Կրտսեր Հակոբոս» է կոչվում: Հակոբոս Ալփյան առաքյալն Ավետարանը քարոզել է Պաղեստինի հարավային ծովեզերքում և Եգիպտոսում, ուր և նահատակվել է:

Ս. Շմավոն կամ Սիմոն առաքյալն իր նախորդի՝ Հակոբոսի նման միայն հանվան է հիշատակվում Ավետարանի մեջ: Հայտնի է նաև Կանանացի անունով, որ նշանակում է նախանձահույզ: Այս անունով մի խմբակցություն կար հրեաների մեջ, որն առանց միջոցների մեջ խտրականություն դնելու, պայքարում էր օտար՝ հռոմեական լուծը թոթափելու և ուրացող կամ օտարամոլ հրեաներին վերացնելու համար: Սիմոն Կանանացին քարոզել և նահատակվել է Պարսկաստանում:

#### Commemoration of Sts. James and Simon Apostles

In order to differ St. James Apostle from James, the son of Zebedee, he is named “James son of Alphaeus” and “James Junior”. The Apostle James son of Alphaeus has preached the Gospel in the Southern parts of Palestine and in Egypt, where he has been martyred.

St. Simon the Patriot Apostle is famous as “Simon of Canaan”, which also means “Zealous”. There was a grouping with that name among the Jews, who without making distinctions between means struggled against the foreign Roman yoke and for eliminating the betraying and fond of foreigners Jews. St. Simon has preached and has been martyred in Persia.

#### ԱՂԱՉՈՒՄ ԵՄ ՏԵՐ ՀԻՍՈՒՍ. ԶՈՐԱՎՈՐ ԱՂՈԹՔ

Աղաչում եմ, Տե՛ր Հիսուս, և ընկնում Քո սուրբ Խաչի առջև. նրա բարեխոսությամբ ընդունիր աղաչանքներս, կատարիր խնդրվածքներս և նրանով գորացրու ինձ իմ կոչման մեջ, որի համար կանչվեցի, ու Քո պատվիրաններում, որոնք սովորեցի: Տուր ինձ նրանով գործություն և ժուժկալություն, զգաստություն, առողջություն և պահպանություն իմ անձին օր ու գիշեր և ամեն ժամ՝ ննջելիս ու արթնանալիս, ընթանալիս և կանգ առնելիս, գործերում ու տոբություններում, աղոթքի և պահքի մեջ, նաև՝ Քո կամքը կատարելիս:

Այն թող ամուր բերդ լինի ինձ և հզոր աշտարակ՝ թշնամու առաջ: Զարդարիր ինձ սրանով՝ իբրև հոգեղեն զարդով և իմանալի լույսով:

Եվ Գաբրիելի ահեղ բարբառի օրը՝ սուրբ Խաչդ երևալիս, լուսավորիր խավարած հոգիս՝ լույսով բարձրանալու անմահ Փեսայիդ ընդառաջ՝ խառնվելու հայրապետների երամներին, մարտիրոսների դասերին և հրեշտակների գնդերին:

ՍՈՒՐԲ ԵՓՐԵՍ ԱՍՈՐԻ

#### Ծննդյան տարեդարձի օրվա աղոթք

Ամենակա՛լ Աստված, արարիչ եւ պահող բոլոր արարածների, դու, որ քո օրհնյալ կամքով սքանչելի կերպով ստեղծեցիր ու կազմեցիր ինձ եւ քո մեծ նախախնամությամբ պահեցիր ինձ՝ ծննդյանս օրից մինչեւ այսօր, բավարարելով իմ բոլոր պետքերը: Օրհնում եւ փառավորում եմ քո անբավ գթությունը, երկնաւո՛ր Հայր եւ շնորհակալություն եմ հայտնում քեզ: Երկարացրու իմ կյանքի ժամանակը, որպեսզի դառնամ իմ գործած հանցանքներից եւ իմ կյանքի մնացյալ օրերը անցկացնեմ բարեգործությամբ ու քո պատվիրանների համաձայն, աստվածահաճո եւ զգաստ կենցաղով ու բարեպաշտությամբ, քո՛ փառքի համար, որպեսզի հոգիս փրկվի, ծնողներս մխիթարվեն եւ եղբայրներս ու բոլոր ընկերներս ուրախանան եւ օգտվեն: Եւ ինչպես որ քո սքանչելագործությամբ ինձ մորս արգանդից հանեցիր, որ ժամանակավոր կերպով այս աշխարհում ապրեմ, նույնպես էլ վերջին օրը ինձ երկրի արգանդից հանիր, որ անմահական եւ հավիտենական կյանքով ապրեմ Քո արքայության մեջ, Քո լույսի շնորհքով, որովհետեւ դո՛ւ ես իմ Տերը եւ Աստվածը, ո՛վ իմ փրկիչ եւ ապավեն. Քո շնորհքի օգնության ապավինած եմ մնում այժմ եւ հավիտյանս հավիտենից: Ամեն: Աղբյուր «Սյունյաց Կանթեղ» N30

#### 4: Հոգեհափառ - Memorial Service

There is no Memorial service at St Yeghiche Armenian Church this week

May the Lord rest the souls of the deceased members of our community in peace and console their loved ones with the comforting power of His Holy Spirit.

#### Reverence Required

Please be advised that, according to the tradition of the Armenian Church, members of the congregation are strongly reminded to refrain from walking in and out of the Sanctuary while services are in progress.

You are **especially** reminded **not to do so** during

- 1) **The Chanting of the Gospel,**
- 2) **Recitation of the Creed (Havadamk),**
- 3) **The Challis Procession,**
- 4) **The Hymn “Der Voghormya”, and**
- 5) **Distribution of the Holy Communion.**

#### Participation In The Devine Liturgy

Please use the Divine Liturgy books that are found at the entrance to the church. These books contain the Armenian text as well as English translation in the second section. Parishioners are also encouraged to sing with the choir, whose real purpose is to lead the congregation in singing the hymns. Also join in the recitation of the Creed (Havadamk E Me Astvadz).

#### ENQUIRIES:

For ecclesiastical/parish matters including requests for Christenings, Home Blessing (Dnorhnek), Donations in Lieu of Flowers, arrangements for Marriages and other church administrative matters please contact Mr Viken Haladjian, phone: **07970 146 280** or **020 7373 8133** or by emailing [info@styeghiche.org.uk](mailto:info@styeghiche.org.uk)  
Alternatively please approach a member of the Parish Council at church every Sunday after Badarak.

#### Requiem Service (Hokehankisd)

For Requiem Service (Hokehankisd), please call the church office at **020 7373 8133**, or e-mail us your request to [info@styeghiche.org.uk](mailto:info@styeghiche.org.uk) by Thursday, in order to include the name(s) of your beloved one(s) in the Sunday bulletin. There is no set monetary amount for requesting Hokehankisd; any amount donated is appropriate and appreciated.

**Please remember our Church in your prayers.**

#### ANNOUNCEMENT:

*Your kind donations are gratefully accepted:*

In order to meet the ever increasing church functioning expenses, The St Yeghiche Parish Council would like to appeal to all members of the community for their annual membership dues and generous donations. Please complete this form and hand your donation to the members of the Parish Council at the side entrance of the Church. Alternatively please post your cheque to: St Yeghiche Armenian Church Parish c/o Dr. Setrag Karanfilian, 13b Cranley Gardens, Kensington London, SW7 3BB. Please make your cheques payable to: “St Yeghiche Armenian Church”.

Alternatively you can arrange a standing order or donation by bank transfer to our St Yeghiche Armenian Church Parish Ltd Account at:

HSBC, Acc.no: 42674432, Sort code: 40-02-26, IBAN: GB73MIL40022642674432, BIC: MIDLGB2106F

I wish to arrange a standing order/make a donation £ .....to the St Yeghiche Arm. Church Parish.

Name: .....

Address: .....

Tel:.....Email:.....